



«Դիվիզանի կենտրոնական դպրոց» կրթական հիմնադրամ  
Ք. Երևան 0009, Կոբյունի 19ա,  
ք. Դիվիզան 3905, Մոլդովական 77  
Հեռ.՝ + 374 10 592762, + 374 94 543707  
Էլփոստ՝ [welcome@dcs.am](mailto:welcome@dcs.am) Կայքէջ՝ [www.dcs.am](http://www.dcs.am)

## Հայոց լեզվի քննական հարցաշար

### 8-րդ դասարան

#### 1. Կարդալ տեքստը և անհրաժեշտ տեղերում լրացնել բաց թողած տասերը: [20]

Դարեր, շատ դարեր առաջ մի տափաստանում ապրում էին **ուժեղ** ու համար—ակ մարդիկ: Անանցանելի անտառները **երեք** կողմից շրջապատել էին նրանց բնակավայրը, իսկ չո—որդ կողմում տափաստան էր:

Որտեղից որտեղ երևան եկան ուրիշ ցեղեր և գրավելով տափաստանը՝ բնիկներին քշեցին խավարչտին անտառի խորքերը, ուր նե—ած ճահիճներ էին, անանցանելի բավիղներ՝ զուրկ արևի կենարար ճառագայ—ներից: Ծառերի ճյուղերն այնպես էին միմ—անց հյուսվել, որ առաջ գնալու նույնիսկ արահետ չկար: Դող—րոցքից և զանազան ա—տերից մեռնում էին **մարդիկ**՝ կարոտ լույսի ու մա—ուր օդի: Գա—ջ գարշահոտության մեջ նստած՝ նրանք անգործությունից ար—ունք էին թափում՝ գիշեր ու գ—ր մտածելով այդ վիճակից դուրս գալու մասին:

Հասավ այն պահը, երբ այլ ելք չգտնելով՝ նա—ընտրեցին գնալ թշնամու ոտքը, ստրուկ դառնալ, միայն թե ազատվեին լպ—ծուն **ճահիճներից**: Բայց այստեղ առաջ եկավ Դանկոն՝ գեղեցիկ ու խիզա— մի երիտասարդ, և ասաց.

-Մտածելով քարը ճամփից դեն չես գցի: Վե՛ր կացեք, մտնենք անտառ և ձե—քելով այն՝ **ազատվենք** այս չարագույժ գեհենից:

Դանկոն առա—նորդեց նրանց: Դժվարին էր նրանց ճա—փան: Ամեն քայլափոխի ճահիճը բաց էր անում իր ահարկու երա—ը՝ կլանելու նրանց: Ծառերի ճյուղերը, որ օձերի նման գալարվել էին շուրջբոլորը, փակել էին նրանց ճանապարհը: Երկնչելով դժվարություններից՝ մարդիկ սկսեցին տրտնջալ՝ **երկմտելով**, թե ուր է տանում իրենց այդ անփոր— երիտասարդը:

Իսկ Դանկոն զվա— ու աներկյուղ քայլում էր առջևից՝ վստահ իր առաքելությանը:

#### 2. Տեքստում թավ գրված բառերը ենթարկել ձևաբանական վերլուծության: [13]

---

---

---

---

---

---

---

---

3. Տեքստից դուրս գրել 2 որակական ածական և կազմել դրանց բաղդատական և գերադրական աստիճանները: [7]

---

---

---

---

4. Տրված բայերից ածանցների միջոցով ստանալ ածականներ և գոյականներ, ընդ որում՝ ածանցները չպետք է կրկնվեն: [10]

բայ	գոյական	ածական
հաղթել		
խոսել		
ձևել		
հրապուրել		
ուրախանալ		

5. Տեքստից դուրս գրել 5 տարբեր տեսակի դերանուններ և նշել տեսակները: [10]

---

---

---

---

---

6. Կազմել տրված քանակական թվականների դասական ձևերը: [4]

մեկ \_\_\_\_\_

ինը \_\_\_\_\_

քսանչորս \_\_\_\_\_

միլիոն \_\_\_\_\_

7. Լրացնել աղյուսակը՝ կազմելով տրված բայերի ենթակայական, հարակատար և համակատար ձևերը: [6]

անորոշ	ենթակայական	հարակատար	համակատար
փախչել			
մրմնջալ			
վերցնել			
ծերանալ			
գալ			



